«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԽՈՐՀՈՒՐԴ

---

17 նոյեմբերի, 2021 թ. N 62 - Լ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2022 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի 2–րդ մասի 5-րդ կետը և «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 8.1.7 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության կողմից 2022 թվականին աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման (այսուհետ՝ Արտաքին գնահատում) ենթակա աուդիտորական կազմակերպությունների ցանկը և Արտաքին գնահատման իրականացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ 2022 թվականին Արտաքին գնահատում կիրականացվի, եթե Արտաքին գնահատման ընթացակարգերը «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հաստատված լինեն մինչև 2022 թվականի հուլիսի 15-ը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհրդի հետ համաձայնեցվելուց և Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

Հավելված

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2021 թ. նոյեմբերի 17-ի N 62 - Լ որոշման

Հ/Հ	ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ
1.	«Էկոնոմիկս Աուդիտ» ՍՊԸ	01.09.2022 – 15.09.2022
2.	«ՓրայսուոթերհաուսԿուպերս» ՍՊԸ	12.09.2022 – 27.09.2022
3.	«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ	22.09.2022 – 06.10.2022
4.	«Պրոգրես-Աուդիտ» ՓԲԸ	03.10.2022 – 17.10.2022
5.	«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ	13.10.2022 – 27.10.2022
6.	«Թրասթ Աուդիտ» ՓԲԸ	24.10.2022 – 07.11.2022
7.	«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ	03.11.2022 – 17.11.2022
8.	«Այ էֆ Փի» ՍՊԸ	14.11.2022 – 28.11.2022
9.	«Էյ-էն Աուդիտ» ՓԲԸ	24.11.2022 – 08.12.2022